ԱՐՏԱՇԵՍ ԵՎ ՍԱԹԵՆԻԿ

(կրճատումներով)

(մշակումը՝ Սարգիս Հարությունյանի)

Հին ժամանակներում ալանները, կովկասյան բոլոր լեռնականների հետ միաբանվելով և Վրաց աշխարհի կեսը գրավելով, մեծ բազմությամբ գալիս տարածվում են Հայոց աշխարհով մեկ: Արտաշեսը հավաքում է իր զորքերին և ելնում պատերազմի: Ալանները հայոց զորքերի ճնշումից փոքր-ինչ հետ են նահանջում, անցնում Կուր գետը և բանակ դնում գետի հյուսիսային ափին: Արտաշեսը, հետապնդելով նրանց, իր զորքով գալիս, բանակ է դնում Կուրի հարավային ափին: Գետը դառնում է երկու թշնամի բանակների սահմանաբաժանը:

Հայոց և ալանների զորքերի ընդհարման ժամանակ ալանների արքայազնը գերի է ընկնում Արտաշեսի ձեռքը: Ալանների թագավորը ստիպված հաշտություն է խնդրում: Նա պատգամավորներ է ուղարկում Արտաշեսի մոտ՝ խոստանալով այն ամենը, ինչ Արտաշեսը կամենա, միաժամանակ առաջարկում երդմամբ դաշինք կնքել, որ դրանից հետո ալանների կտրիճները այլևս չեն ասպատակի Հայոց աշխարհը: Արտաշեսը հրաժարվում է պատանի արքայազնին վերադարձնել: Երբ այդ մասին իմանում է արքայազնի քույրը՝ ալանների չքնաղ արքայադուստր Սաթենիկը, որ գտնվում էր հոր մոտ՝ նրա բանակում, գալիս կանգնում է Կուր գետի ափին գտնվող մի մեծ դարավանդի վրա և թարգմանիչների միջոցով ձայն է տալիս Արտաշեսին.

- Քեզ եմ ասում, քա՛ջ այր Արտաշես,
Որ հաղթեցիր քաջ ազգին ալանաց.
Եկ լսի՛ր ալանների գեղաչյա դստեր խոսքը,
Տո՛ւր պատանուն,
Քանզի սոսկ քենի համար օրենք չէ, որ դյուցազները
Այլ դյուցազների զավակներին զրկեն կյանքից
Կամ ծառա դարձնելով՝ ստրուկների կարգում պահեն
Եվ հավերժ թշնամություն
Երկու քաջ ազգերի միջև հաստատեն:

Արտաշեսը, լսելով այս իմաստուն խոսքերը, գնում է գետափ և տեսնելով չքնաղ աղջկան՝ սրտանց ցանկանում է նրան կին առնել: Իսկույն կանչում է իր դայակ Սմբատին, նրան հայտնում իր սրտի փափագը: Միաժամանակ նա Սմբատին հայտնում է, որ կին առնելով ալանների արքայադստերը՝ ինքը դաշինք և ուխտ

կկնքի երկու քաջ ազգերի միջև և պատանուն խաղաղությամբ կվերադարձնի: Սմբատը հավանություն է տալիս Արտաշեսի առաջարկին: Անմիջապես մարդ է ուղարկում ալանների թագավորի մոտ, առաջարկում ալանների օրիորդ Սաթենիկին կնության տալ Արտաշեսին: Ալանների թագավորն ասում է.

- Եվ որտեղի՞ց պիտի տա քաջ Արտաշեսը

Հազար հազարներ և բյուր բյուրեր

Ալանների քաջազգի կույս օրիորդի փոխարեն:

Երբ Արտաշեսին հայտնում են Սաթենիկին կնության առնելու այս թանկ պայմանները, այնժամ.

Հեծավ արի արքա Արտաշեսը գեղեցիկ Սևուկը (ձին)

Եվ հանեց ոսկեօղ շիկափոկ պարանը

Եվ որպես սրաթև արծիվ անց կացավ գետը

Եվ նետեց ոսկեօղ շիկափոկ պարանը

Գցեց մեջքը ալանաց օրիորդի

Եվ շատ ցավեցրեց մեջքը փափուկ օրիորդի՝

Արագ հասցնելով բանակն իր:

Արտաշեսը, բռնությամբ առևանգելով գեղեցիկ Սաթենիկին, բերում է Արտաշատ, մեծ ու շքեղ հարսանիք հրավիրում, հետը ամուսնանում:

Սաթենիկից ծնվում են Արտավազդը և ուրիշ շատ զավակներ: